

Ողջուն, իմ սիրելի՛ հարևան,

Ես Սոֆյան եմ՝ մի երիտասարդ ուսանող, որն արդարության կողմնակից է: Ես ինքս լավատես մարդ եմ: Լավատեսորեն եմ մոտենում կյանքին և գրեթե բոլոր իրավիճակներին:

Գիտե՞ս, սկզբում մտածում էի՝ շատ բարդ կստացվի քեզ նամակ գրել: Մտածում էի՝ ներսումս կխառնվի ամեն բան, հետ կզնամ, տարիների պատմությունները կհիշեմ, ինչ-որ տազնապ կլինի: Մտածում էի ճիշտ բառեր գտնեմ, որ հանգիստ մտքով գրելս հենց քեզ հասնի, որ դու ընթերցես նամակս՝ ամենակարևորը զգալով խաղաղության շունչը: Բայց հասկացա, որ հիմա գրելիս չկա ոչ մի լարվածություն կամ ցավ, միայն ու միայն խաղաղություն զգալով՝ թղթին եմ հանձնում մտքերս: Նույնիսկ նոր գրիչ եմ գնել, որ ավելի հաճույքով գրեմ: Կցանկանայի՞ դու էլ կիսվեիր քո զգացողություններով ու անձնային հատկանիշներով:

Առաջին հիշողություններս հորս հետ եմ կապում, որը պատմել է, որ անհաշտություններ ենք ունեցել, որ փակ սահմաններ ունենք, ու չենք կարող ազատ շփվել, ելումուտ անել: Պատմել է Երասխում մասնակցած կռիվների մասին, բայց երբեք ատելություն չի սերմանել կամ վատ տրամադրվածություն չի ունեցել, այլ՝ հակառակը: Ասում էր, որ ձեզ ատելով չէ, որ գնացել է կռվի՝ դեպի սահման: Պատերազմ չեն գնում ատելով, այլ պատերազմը ինքնափրկության ձև է, որը հրահրում են իշխանությունները:

Ինչպես ինձ շրջապատող շատ մարդիկ, այնպես էլ ընտանիքիս անդամները պատմում են, որ ապրել են նույն գյուղում՝ կողք-կողքի, նույն դպրոցն են գնացել, ունեցել են լավ ընկերներ, լավ հարաբերություններ:

Երևի ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆ է այն երրորդ անձը, որը խանգարում է բացել սահմանն ու երկու երկրների միջև հաշտություն հաստատել:

Ես զգում եմ, որ մենք մեծ առաքելություն ունենք այս կյանքում: Մենք պետք է մի գաղափարի շուրջ միավորվենք ու կազմենք խաղաղության մեր սիմվոլը, աշխարհին ապացուցենք, որ անհնարին ոչինչ չկա:

Հարկավոր է միայն ցանկություն, կամք ու միմյանց լսելու ունակություն:

Հուսով եմ, որ դու էլ չես ցանկանա, որ այս իրավիճակը շարունակվի, ու օրինակ՝ մոտ 20 տարի անց հեռուստացույցի առջև նստած՝ լսես սահմանի լարված իրավիճակի մասին: Եվ անընդհատ շարունակվող այս հարցի շուրջ հենց մենք պետք է լինենք նախաձեռնողները որևէ բան փոխելու մեր կյանքում, ազդելու քաղաքական որոշումների կայացման վրա:

Ես հավատում եմ, որ մեր այս փոքր քայլերով՝ նամակներ գրելով, որոշակիորեն հնարավոր է հասնել խաղաղության հաստատմանը:

Երևի թե այսքանը: Ամենայն անկեղծությամբ եմ գրել նամակս, ենթատեքստեր էլ չկան: Սիրով և անհամբերությամբ կսպասեմ քո նամակին:

Շնորհակալություն լսելու համար:

Հարգանքներով՝  
Սոֆյա